Գիտական հզոր ներուժը դեռ դրսեւորվելու է

Անցնող տարին ինչ տվեց Հայաստանին գիտաշխատողներին, ինչպիսի նոր ձեռքբերումներ արձանագրվեցին, ի մասնավորի, հումանիտար ոլորտում: Այս եւ հարակից հարցերով դիմեցինք Գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար **Վլադիմիր Բարխուդարյանին**:



Վ.Բարխուդարյանը նախ անդրադարձավ կրթական համակարգում ընթացող արմատական բարեփոխումներին, նշելով, որ դեռեւս վաղ է արձանագրել վերջնական արդյունքներ: Ըստ նրա, լուծման կարոտ կարեւորագույն հարց է ավագ դպրոցում «Հայոց պատմությունը» պարտադիր քննական առարկաների շարքում ընդգրկելը: «Հայոց պատմություն» առարկան պետք է դիտվի որպես ռազմավարական՝ համայն հայության համար: Հենց հայոց պատմության դասաժամերի ընթացքում է ձեւավորվում նորահաս սերնդի հայեցի աշխարհայացքը:

2005 թվականը, ըստ Վ.Բարխուդարյանի, բերքառատ էր ԳԱԱ հումանիտար ինստիտուտների համար: Այն նշանավորվեց նաեւ հոբելյանական տարելիցներով: Նախ՝ ԳԱԱ համակարգում պատշաճ մակարդակով ոգեկոչվեց Մեծ եղեռնի 90-րդ տարելիցը: Կազմակերպվեց գիտական նստաշրջան, որին մասնակցեցին բազմաթիվ գիտնականներ հանրապետության տարբեր գիտական կազմակերպություններից եւ արտասահմանյան երկրներից: Եղան ուշագրավ զեկուցումներ, արվեցին թարմ եւ հրատապ հարցադրումներ:

Համազգային բնույթի կարեւորագույն մեկ այլ ձեռնարկ էլ Գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված ընդարձակ գիտաժողովն էր, որին մասնակցեցին գիտնականներ աշխարհի 20 երկրներից:

Վ.Բարխուդարյանը կարեւորեց նաեւ այս ամռանը Վիեննայում կայացած գիտաժողովը՝ նվիրված Հարավային Կովկասի ժողովուրդների գրավոր լեզուների ծագման եւ ձեւավորման խնդիրներին, որին մասնակցել են մի շարք անվանի գիտնականներ Հայաստանից, Վրաստանից եւ ԱՊՀ այլ երկրներից: Այս գիտաժողովում հնչած զեկուցումները հիմնականում վերաբերում էին հայոց գրերի ստեղծմանն ու Մեսրոպ Մաշտոցի գործունեության լուսաբանմանը:

ԳԱԱ-ի փոխպրեզիդենտը կատարված աշխատանքների շարքում առանձնացրեց նաեւ աշնանը Հայաստանում իտալական մշակույթի միամսյակի անցկացման գործում Ակադեմիայի մասնակցությունը: ԳԱԱ-ի նախագահության նախաձեռնությամբ այդ առիթով կազմակերպվեց գիտական նստաշրջան, որի ընթացքում արծարծվեցին հայ-իտալական պատմամշակութային կապերին առնչվող խնդիրներ: Գիտաժողովում բանախոսություններով հանդես եկան արտասահմանից հրավիրված 7 եւ Հայաստանը ներկայացնող 15 մասնագետներ: Զեկուցումների հիմնական նյութը վերաբերում էր հայ մշակույթի զարգացման գործում Իտալիայի (Հին Հռոմից սկսած) եւ իտալական մշակույթի ունեցած դերին, «Մխիթարյան» միաբանության գործունեությանը:

Գիտությունների ազգային ակադեմիայում շարունակվում է գիտական կադրերի պատրաստման անընդմեջ գործընթացը: Այս առումով գիտնականը կարեւոր գործոն է համարում երիտասարդ գիտաշխատողների ամենամյա գիտաժողովների կազմակերպումը պատմության, հնագիտության եւ ազգագրության, արվեստի, արեւելագիտության ինստիտուտներում: Նա անդրադարձավ ԳԱԱ պատմության ինստիտուտում ընթացող մեծածավալ աշխատանքին՝ հայ ժողովրդի պատմության նոր քառահատորյակի ստեղծման ուղղությամբ, որին ներգրավված են մի շարք անվանի գիտաշխատողներ:

Վ.Բարխուդարյանը համոզմունք հայտնեց, որ գիտական համակարգում փոփոխությունները չեն վնասել ՀՀ ԳԱԱ-ի բարձր հեղինակությանը եւ անհիմն համարեց այն պնդումները, թե փոփոխությունների արդյունքում Հայաստանի թիվ 1 գիտական հիմնարկը վերածվելու է հասարակական կազմակերպության: *«Ակադեմիան՝ իր ներկա կառուցվածքով, հուսալի գիտական ներուժով, անբասիր հեղինակությամբ պետք է պահպանել նաեւ հետագա սերունդների համար,-* համոզված է փոխպրեզիդենտը, - *քանզի Հայաստանը ամբողջ աշխարհում ճանաչում ու հեղինակություն է վաստակել շնորհիվ իր մշակույթի եւ գիտության»*:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ